

մօրակացւոց: Այլ զոր տրամատեցի ի վերոյ՝ եւ այլ քեզ դարձեալ ԺԲ. թէ Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, զի ազգ եւ ազինք փառաւորին եւ թէ օտարք խուժ եւ դուժ ի հօտն վարզիդ¹⁾ զուարթանան: Զի թէ մերձեցողք բաժակ եւ ճաշակ գտեալ զքեզ՝ մխիթարին որպէս ի բժշկէ եւ ի երգարանէ եւ ի բուրաստանէ, եւ ես իսկ փառաւորեալ եմ քան զանդամն, ի վեր քան զարժանն իմ ըստ իմ ախորժակաց: Տե՛ս եւ լաւ ի միտ առ զամս երիտ շրջելն քո ընդ ոմամք, որպէս թէ գաղանի սէրմայէ ստացար քեզ, եւ զայն որ ես քեզ յայտնել ամաչեմ վասն իմ առաւել խոհեմութեանս եւ երկիւղածութեանս՝ զայն դու ահանատես եւ ահանջալուր քեզէն եղեր եւ խարբալիլ կամեցար քեզէն որպէս զցորեան, եւ ես աղաչեցի զՏէր զի մի պակասեսցին հաւատք քո: Յիշեա՛ զբան Սիրաքայ թէ Մի՛ նախանձիր ընդ անօրէնս, զի ոչ գիտես զկատարած նոցա. եւ լո՛ւր Յոհաննու թէ Այսուիկ յայտնի են ի միմեանց որդիք Աստուծոյ եւ որդիք սատանայի, այլովք հանդերձ: Եւ լուար զահվալի ալէմն եւ զգրուց եւ զարտաքնոցն եպերանս եւ զբամբասանս, վասն որոյ եւ դու յայնց յամենայնէ զգուշ լի՛ր, զի մի ի նոցին սակի անկեալ կոճոպիցիս, ըստ այնմ՝ էտէպսըզտէն էտէպ ալմաք, էյիլէրտէն էյլիկ օկրէնմէք: Շա՛տ գրեցի, շատ գիտես, որպէս բազումքն ապա չեն առներ՝ Ոչ լսելիքն են օրինաց այլ առնելիք, եւ Փոքր կոչին յարքայութեան: Յօհաննէս ասէ. Մի՛ խաբիք, որ առնէ զմեզս՝ չէ նա Աստուծոյ. եւ Տէրն ասէ. Որ գործէ զմեզս՝ ծառայէ մեղացն . . . : Որ մեղանչէ՝ ոչ ետես եւ ոչ ծանեալ զնա, ասէ: Որ զհետ մարմնոյ պղծալից ցանկութեանց երթան՝ արհամարհողք են տէրութեան, եւ այլն: Դարձեալ ասէ

1) վարդիտ.